Հավելված 3
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

2022-2023 ուսումնական տարվա ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների (Մաթեմատիկա, Ֆիզիկա, Աստղագիտություն, Կենսաբանություն, Ինֆորմատիկա, Քիմիա, Աշխարհագրություն) կազմակերպման և անցկացման

1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2022-2023 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների «Մաթեմատիկա» առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Աշակերտների անվանական ցուցակների ձևանմուշները, առաջադրանքները, պատասխանները, արդյունքները և Օլիմպադայի վերաբերյալ այլ տեղեկությունները տեղադրվում են www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով՝ առաջին /դպրոցական/, երկրորդ /մարզային/ և երրորդ /հանրապետական/:
4. Օլիմպիադան անցկացվում է յոթ խմբերով.
   I խումբ՝ 5-րդ դաս., II խումբ՝ 6-րդ դաս., III խումբ՝ 7-րդ դաս., IV խումբ՝ 8-րդ դաս.,
   V խումբ՝ 9-րդ դաս., VI խումբ՝ 10-րդ դաս., VII խումբ՝ 11-12-րդ դաս.:
5. Օլիմպիադայի բոլոր փուլերի տարբերակները՝ ըստ խմբերի, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել «Մաթեմատիկա» առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող, այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրենը մինչև 2022թ. նոյեմբերի 10-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ ձևանմուշի, ներկայացնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/:

10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2022թ. նոյեմբերի 14-ը ներառյալ մասնակիցների ցուցակներն՝ ըստ ձևանմուշի, ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ info@olymp.am հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2022թ. նոյեմբերի 21-ին ժամը 13:00-ին:
13. Օլիմպիադայի առաջին փուլի արդյունքները չեն բողոքարկվում:
14. Դպրոցի տնօրենը պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/ մինչև 2022թ նոյեմբերի 23-ը, ժամը 17:00-ն:
15. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ, մինչև 2022թ. նոյեմբերի 25-ը, ժամը 17:00-ն:
16. Պատասխանների ձևաթղթերը համակարգչային ծրագրի միջոցով մշակվում, ստուգվում և արդյունքները հրապարակվում են երկրորդ փուլի անցկացման օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ:
17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է մարզպետարանների /Երևանի քաղաքապետարանի/ կողմից սահմանված վայրում:
18. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
19. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2023թ. հունվարի 18-ին ժամը 11:00-ին:
20. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:
21. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում՝ առարկայական հանձնաժողովի կողմից նշանակված ժամին:
22. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
23. Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ ձևանմուշի) մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2023թ. հունվարի 23-ը ժամը 17:00-ն ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով:
24. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2023թ. փետրվարի 18-ին և 19-ին, սկիզբը՝ ժամը 10:00- ին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված վայրում:

25. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
26. Օլիմպիադայի երրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում՝ առարկայական հանձնաժողովի կողմից նշանակված ժամին:
27. Երրորդ փուլի մասնակիցներին տրվում են օլիմպիադայի մասնակցության հավաստագրեր:
28. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով:
29. Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ: